ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___»«_____» 2025թ. **N-------Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 724-Ն, 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 683-Ն, 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 723-Ն ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 785-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի «Երևան քաղաքում փողոց վերանվանելու մասին» N 724-Ն որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1) «1.Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Սերո Խանզադյան փողոցի՝ հ.65 և հ.56 տնատիրություններից մինչև հ.152 և հ.175/4 տնատիրություններ տանող ճանապարհահատվածը և նրան զուգահեռ նրբանցքները վերանվանել «Նորքի փողոց», «Նորքի փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է Նորքի փողոցի հ.151 և հ.153 հասցեների հարակից տարածքից, Նորքի գերեզմանատան մոտով հասնում մինչև Գյուրջյան փողոցի սկզբնամաս), «Նորքի փողոց, 2-րդ նրբանցք» (սկսվում է Նորքի փողոցի հ.122 հասցեի հարակից տարածքից, հատում Գ.Հովսեփյան փողոցը և շրջանաձև պտտվելով հասնում հ.9 հասցեի հարակից տարածք):»:

2. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի «Երևան քաղաքում Օհան Դուրյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» N 683-Ն որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1) «1.Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 5-րդ փողոցն անվանակոչել հայ մեծանուն դիրիժոր Օհան Դուրյանի անվամբ՝ «Օհան Դուրյան փողոց» (սկսվում է Նորքի գերեզմանատան մոտից, ջրանցքին զուգահեռ հասնում՝ Երևանի Արգիշտի Առաջին արքային անվան հ.61 հիմնական դպրոց):»:

3. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «Երևան քաղաքում Լուսինե Զաքարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» N 723-Ն որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1) «1. Երևան քաղաքի Նորքի 7-րդ փողոցը և նրբանցքն անվանակոչել հայ երգչուհի, Կոմիտասի, հայ հոգևոր երգերի ու տաղերի կատարող Լուսինե Զաքարյանի անվամբ՝ «Լուսինե Զաքարյան փողոց» (սկսվում է Արա Հարությունյան փողոցից, Օհան Դուրյան փողոցին զուգահեռ, հասնում հեռուստաաշտարակից արևելք ընկած անտառաշերտ), «Լուսինե Զաքարյան փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է Լուսինե Զաքարյան փողոցի հ.98 հասցեից, հասնում մինչև հ.110 հասցե):»:

4. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մայիսի 23-ի «Երևան քաղաքում Երեմ Վարդանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» N 785-Ն որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1) «1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 4-րդ փողոցը և նրբանցքն անվանակոչել հայ քանդակագործ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Երեմ Վարդանյանի անվամբ՝ «Երեմ Վարդանյան փողոց» (սկսվում է Արա Հարությունյան փողոցից, հասնում՝ Այծեմնիկ Ուրարտուի փողոց), «Երեմ Վարդանյան փողոց, 1-ին նրբանցք (սկսվում է Նորքի 2-րդ փողոցի հ.32 հասցեի հարակից տարածքից, հասնում մինչև Երեմ Վարդանյան փողոցի հ.25 հասցեի հարակից տարածք):»:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 724-Ն, 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 683-Ն, 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 723-Ն ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 785-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի «Երևան քաղաքում փողոց վերանվանելու մասին» N 724-Ն որոշմամբ Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Սերո Խանզադյան փողոցի հ.65 և հ.56 տնատիրություններից մինչև հ.152 և հ.175/4 տնատիրություններ տանող ճանապարհահատվածը վերանվանվել է Նորքի փողոց, սակայն փողոցի նրբանցքները մնացել են հին անվանումով:

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «Երևան քաղաքում Լուսինե Զաքարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» N 723-Ն որոշմամբ Երևան քաղաքի Նորքի 7-րդ փողոցն անվանակոչվել է հայ երգչուհի, Կոմիտասի, հայ հոգևոր երգերի ու տաղերի կատարող Լուսինե Զաքարյանի անվամբ:

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մայիսի 23-ի «Երևան քաղաքում Երեմ Վարդանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» N 785-Ն որոշմամբ Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 4-րդ փողոցն (սկսվում է Արա Հարությունյան փողոցից, հասնում՝ Նորքի 13-րդ փողոց) անվանակոչվել է հայ քանդակագործ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Երեմ Վարդանյանի անվամբ:

Նորքի 4-րդ և 7-րդ փողոցներն ունեն նաև նրբանցքներ, սակայն որոշումներում չեն նշվել, որն առաջացնում է որոշակի խնդիրներ:

Բացի այդ, հաշվի առնելով, որ Նորքի 13-րդ փողոցն անվանակոչվել է Այծեմնիկ Ուրարտուի փողոց, անհրաժեշտություն է առաջացել նաև փոփոխել Երեմ Վարդանյան փողոցի նկարագիրը:

Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի «Երևան քաղաքում Օհան Դուրյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» N 683-Ն որոշմամբ Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 5-րդ փողոցն անվանակոչվել է հայ մեծանուն դիրիժոր Օհան Դուրյանի անվամբ, սակայն որոշման մեջ նշված չէ փողոցի նկարագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի N 724-Ն, Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի N 683-Ն, Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 723-Ն և Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մայիսի 23-ի N 785-Ն որոշումների մեջ կատարել փոփոխություններ, որով կանվանակոչվի նաև նշված փողոցների նրբանցքները և կսահմանվի փողոցների և նրբանցքների նկարագրերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ